ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/35817-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 12-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) (Պ-614-08.06.2023-ԱՌՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է հետևյալը.

1. Նախագծի 1-ին հոդվածում «66-րդ» թիվն առաջարկում ենք փոխարինել «68-րդ» թվով՝ նկատի ունենալով, որ գործող օրենքում արդեն իսկ առկա են 66-րդ և 67-րդ կետեր:

2. Նախագիծի 1-ին և 2-րդ հոդվածներով լրացվող կարգավորումների մեջ կիրառվող հասկացություններն առաջարկում ենք նույնականացնել, մասնավորապես՝ մի դեպքում կիրառվում են «ներպատվաստվող բժշկական արտադրատեսակներ», իսկ մյուս դեպքում՝ «ներպատվաստվող (իմպլանտացվող) բժշկական արտադրատեսակներ» հասկացությունները:

Սույն դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջից, որի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, կամ այլ նորմատիվ ակտով տրված է այդ հասկացությունների կամ տերմինների այլ սահմանում, ապա տվյալ ակտով տրվում են այդ ակտի էությունից

բխող դրանց սահմանումները: Սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ